

Հրապարակումներ

ՆՄՈՒՇՆԵՐ ՔԵՍԱՊԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԽԱՂԻԿՆԵՐԷՆ

ՄԻՀՐԱՆ ՄԻՆԱՍԵԱՆ

Քեսապը կը նկատուի Սուրբոյ ամենէն կենսունակ եւ ամենէն բերրի գիւղերէն մէկը: Անոր հողը շաղախուած է հայ գիւղացիին օրհնեալ քրտինքով, այն գիւղացիին, որ դարերէ ի վեր, դիմադրելով ամէն դժուարութեան, հաւատարմօրէն կը պահպանէ իր ուրոյն դիմագիծն ու աւանդութիւնները, ու բծախնդրօրէն կը սորվեցնէ նոր սերունդին իր բարբառն ու անով հիւսուած գեղեցիկ երգերն ու խաղիկները:

Այս յօդուածով կը ներկայացնենք Քեսապի եւ շրջակայ տասնեակ մը հայկական գիւղերէն գրի առնուած ժողովրդական 43 անտիպ խաղիկներ (ցարդ մեր հաւաքած խաղիկներուն թիւն է 123), որոնք իրենց ճոխութեամբ եւ լեզուական ճկունութեամբ իւրայատուկ տեղ մը կը գրաւեն Քեսապի բանահիւսութեան մէջ:

Սաղիկները երկու կամ չորս տողանի գողտրիկ երգեր են, որոնք կ'երգուին ընդհանրապէս հարսանեկան խրախճանքներու ժամանակ: Պարողներու խումբը կը կրկնէ յանկերգի մը բառերը, որմէ ետք, խաղասացը կ'երգէ երկու կամ չորս տողանի խաղիկ մը, եւ կամ՝ չորս տողանի խաղիկի մը երկու տողերը: Երբեմն շարասացին երգածները իրարու հետ կ'ունենան իմաստային կապ մը, ու կը կոչուին շար (տեղական բարբառով՝ շօրր), որ դէպքի մը կամ երեւոյթի մը նկարագրութիւնը կու տայ, երբեմն ալ կ'ունենայ բանակոխային բնոյթ:

Յաճախ շարի մէջ կը հանդիպինք առանձին տողերու, որոնք ծանօթ խաղիկէ մը առնուած կ'ըլլան, եւ կամ իրենց իմաստային ամբողջականութեամբ կը ներկայացնեն առանձին խաղիկ մը:

Չորս տողանի խաղիկի մը բոլոր տողերն ալ իրարու հետ կ'ունենան իմաստային կապ մը, բայց յաճախ խաղիկի մը առաջին, եւ երբեմն

ալ երկրորդ տողերը յաջորդ տողերուն հետ ոչ մէկ առնչութիւն կ'ունենան: Այդ տողերը կը ծառայեն միայն խաղիկի յանգաւորման.

Ձեռնոցով կը քաղն քուզը,
Դամակով կը կեղուն աղամաքուզը,
Տասնեւհինգ տարեկան չեղած՝
Երեք գոյն կը ներկեն մազը (տես՝ աստ, խաղիկ թիւ 38):

Նոյնը կրնայ պատահիլ նաեւ երկտողանի խաղիկներու մէջ.

Ընկուզեմիւն քոչմիկ մը քուաւ,
Աղջիկէն համբոյր մը առաւ (տես՝ խաղիկ 29):

Այս խաղիկներուն մեծ մասը կը խօսի սիրոյ մասին: Մեծ է թիւը նաեւ այն խաղիկներուն, որոնք կը խօսին ամուսնական ծրագիրներու մասին:

Միշտ չէ սակայն որ երիտասարդ մը կը յաջողի հասնիլ իր մուրազին: Ան կը հանդիպի ընտանեկան արգելքներու, զժուարութիւններու, որոնք յաճախ կը ստիպեն զինք իր սիրածը փախցնելու որոշումներ առնելու: Բայց կ'ըլլան բախտաւոր երիտասարդներ ալ, երբ աղջրկան կողմը ինք կ'ըլլայ ամուսնութիւն առաջարկողը, կամ աղաչողը.

Ծով կտրեց վերի արտը,
Եղած եմ Քեսապի լորտը,
Կ'աղաչեմ դրացիները,
Որ առնեմ գոյգերէն մէկը (տես՝ խաղիկ թիւ 2):

Խաղիկներուն մէջ քննադատութեան կ'ենթարկուին նաեւ օտարականի, այս պարագային ոչ-քեսապցիի՝ քաղաքացի հայերու հետ ամուսնացողները.

Կ'ըսեմ պիտի զղջայ՝
Օտարականի հետ ամուսնացողը (տես՝ խաղիկ թիւ 39):

Երբեմն ալ կը խօսուի նաեւ աղջիկներու ճարպիկութիւններուն կամ «սատանայութիւններուն» մասին, որոնցմէ միշտ ալ կը զգուշանայ քեսապցի երիտասարդը.

Տեսայ զիմք՝ առանձին էր,
Վախցայ ձգէ զիս թակարդը (տես՝ խաղիկ թիւ 30):

Կարգ մը խաղիկներու մէջ երիտասարդը իր բողոքը կ'արտայայտէ սիրած աղջկան փոփոխամիտ կեցուածքին հանդէպ:

Կտրուած մագերով աղջնակ,
Ունեցածդ հարիւր քնաւորութիւն է (տես՝ խաղիկ թիւ 14):

Քեսապի ժողովրդական խաղիկները կը տարբերին պատմական շրջաններու տեղական երգերէն, այն պատճառով, որ մինչեւ այսօրս գոյատեւող գիւղ մըն է Քեսապը, որ միշտ ալ կապ պահած է ժամանակին հետ: Վերջին տասնամեակներուն, մանաւանդ ամառները, հոն օդափոխութեան գացողներուն հետ շփման մէջ մտնելով՝ գիւղը սկսաւ զարգանալ, արդիականանալ, իսկ տեղւոյն երիտասարդներն ու երիտասարդուհիները սկսան որդեգրել քաղաքացիին զանազան շարժումներն ու հագուստի նորաձեւութիւնները: Այս բոլոր փոփոխութիւնները անշուշտ որ աննկատ պիտի շանցնէին շարասացին աչքէն:

Տեսայ՝ չգիտցայ զինք,
Թանձր քսած էր ծարիրը (տես՝ խաղիկ թիւ 33):

Կամ՝

Քեսապի հագուստին նորաձեւութիւնը,
Կարճէն ելաւ մինչեւ երանքը (տես՝ խաղիկ թիւ 36):

Սիրային խաղիկներու կողքին կան նաեւ (թէեւ աւելի նուազ թիւով) ընկերային երեւոյթներու մասին խօսող խաղիկներ, որոնք յաճախ գեղեցկօրէն կը գծեն տեղացիի մը նկարագիրը, ծաղրելով անոր բնաւորութեան թերի կողմերը:

Ժայռին տակը հիմկա էր,
Կարթան հօրեղբայրը աղուէս էր (տես՝ խաղիկ թիւ 43):

Այս խաղիկները գրի առնուած են 1979-1982 թուականներուն, մեծ մասամբ նշանաւոր խաղասացներէ, բայց նաեւ պատահաբար՝ քանի մը խաղիկ գիտցող գիւղացիներէ:

Անցեալին, շրջանի ամենէն նշանաւոր խաղասացը եղած է Սեկունան, որ երգած է տեղական բարբառով ու թրքերէնով, եւ նկատուած է բանակաբիւային շարի անմրցելի վարպետը: Ներգաղթի օրերուն ան անցած է հայրենիք, ու կարճ ժամանակ ետք՝ մեռած: Հիներէն նշանաւոր եղած են նաեւ Գաթուլին, Թուփալ Մինասը (Մինաս Սարմազեան), Նըննօշը եւ Յովհաննէս Քէլէնճեանը:

Այսօր՝ շրջանի ամենէն ծանօթ խաղասացները կը նկատուին Կե-

կուսը (Կիրակոս Սաղտճեան, գարատուրանցի, այժմ՝ էքիզ Օլուզ) եւ ժիրայր Թրթրեանը (չազալճըզցի), որոնք, հաւատարիմ մնալով իրենց նախնիքներուն աւանդներուն, կը շարունակեն պահել շարելու պապենական սովորութիւնը: Շրջանի շարողներէն նշանաւոր են նաեւ Մըշէլը (Գէորգ Գազէզեան), Կանտին (Սիւան Սուլեան, գարատուրանցի), անոր որդին՝ Նշանը, Խիչա Թրթրեանը (գարատուրանցի, այժմ՝ Պէյրութ), իր տղան՝ Ստեփանը (այժմ՝ Հալէպ): Մենք օգտուած ենք այս բոլորէն:

Խաղիկներու գրառման աշխատանքին մէջ մեզի մեծապէս օգտակար դարձած են տեղացի երիտասարդներէն Մերոն Փանոսեանն ու Վաչէ Պէօճիւքեանը: Այս առիթով բոլորին կը յայտնենք մեր խորին շնորհակալութիւնները:

Շնորհակալութեան խօսք նաեւ «Քեսապի ժողովրդական Երգարուեստը» (Հալէպ, 1980, 123 էջ) գիրքի հեղինակ՝ Յակոբ Չոլաքեան, որ յանձն առաւ քեսապերէն խաղիկներու լեզուական կարգ մը սրբագրութիւնները:

Յիշենք նաեւ որ Յ. Չոլաքեան իր այս գիրքին 43-60 էջերը յատկացուցած է շրջանի ժողովրդական խաղիկներուն, ուր տրուած են երկտողանի ու քառատող 118 խաղիկներ:

Նկատելով որ այս բարբառը անձանօթ է շատերուն, յարմար նկատեցինք իւրաքանչիւր խաղիկի հետ տալ նաեւ անոր աշխարհաբար թարգմանութիւնը: Թարգմանութիւնները եղած են բառացի, ու զըժբախտաբար կորսնցուցած իրենց տաղաչափական յատկութիւնները:

Բարբառով տրուած խաղիկներուն մէջ գործածուած կ' հնչիւնը կը համապատասխանէ արաբերէն ٴ-ին, իսկ ٴ-ն արաբերէն ٴ-ին: ٴ-ն ա եւ ٴ ձայնաւորներու միջին որակն է. իսկ ٴ-ն՝ ի եւ ٴ ձայնաւորներու:

Իրենց վրայ երկու կէտ (· ·) ունեցող ա, օ եւ ու տառերը ունին բմային արժէք:

ԽԱՂԻԿՆԵՐ

1

Կէ'լլէն տիէղը վէսկիցուն,
Տիէղը ծաղէկ տընկիցուն,
Նամութը քի դօն շըպէն
Քօյն սիրուօժը քի տըվէն:

Կալին տեղը հերկեցին,
Տեղը ծաղիկ տնկեցին,
Երանի քեզի բարեկամ,
Քո սիրածը քեզի տուին:

2

Ծուով կըտըրից վըրը օըրտը,
 Ըղուօծիմ՝ Քէ՛սպու յօրտը,
 Հա եաղչիցն դըրէ՛ցնիրը,
 Քի առնիմ գուգիրէն փօըրտը:

*Ծով կտրեց վերի արտը,
 Եղած եմ Քեսապի լորտը,
 Կ'աղաչեն դրացիները,
 Որ առնեմ գոյգերէն մէկը:*

3

Ճըղուօն շինին ըզ կ'ունտակ'ը,
 Զօրը նուղվա ի կ'ակ'ը,
 Հա նըշէնին ըզ քինթը,
 Ետաանջը քէ՛կին կ'ունտակ'ը:

*Ճիւղով կը շինեն զէնքին կոթը,
 Զուրը կը հասի գուռը,
 Կը նշանեն աղջիկը,
 Առաջ որ քակեն խանձարուրը:*

4

Կ'արշէդ պէ՛տվօըծը պօըտի,
 Ի՛ննի՛մնիրը ըրվա՞դ շօըտի,
 Ակա՛ն քի հատըտ կինօըս,
 Կէ՛րգըվիլըդ շօըտ մուօտի:

*Դիմացդ պատուածը պատ է,
 Խօսքերը վրադ շատ է,
 Եթէ հանգիստ կենաս,
 Ամուսնանալդ շատ մօտ է:*

5

Եէմէնէն խութին ի վիտտը,
 Զօյն իեր, պա՛լլա՞ իրօըց հիտը,
 Թի չըսէկկու իս տա՛րա,
 Պըր կէ՛րգըվիմ ի հիտը:

*Կօշիկը կ'անցընեն ոտքը,
 Զիւն էր, յայտնի ըրաւ հետքը,
 Եթէ չմեռայ այս տարի,
 Պիտի կարգուիմ հետը:*

6

Թէ՛նուօն շինին ըզ քըրխանան,
 Տէ՛ճուօն հէ՛մպըրին ըզ լախանան,
 Շուն ի՛շկէն, քի չառնիս գէս,
 Կըննուօս Քէ՛սպու մասխարան:

*Թանով կը շինեն չորթանը,
 Տունկով կը համրեն կաղամբը,
 Շան աղջիկ, թէ չառնես գիս,
 Կ'ըլլաս Քեսապի ծաղրը:*

7

Պաղչէն պօըտը վըրպօ եէր,
 Իմ առուօծը վըրքօ եէր:

*Պարտէզին պատը ծուռ էր,
 Իմ առածս որբուկ էր:*

8

Սունտը ծիծիցն գօղղը,
Պըր ուրթունգ Լընդիցն¹ թօղղը,
Պըր աունիցն ըգ վարնիյը,
Իշալլահի չըթթի չուգուօղը:

*Սանդին մէջ կը ծեծեն աղը,
Պիտի երթանք Լընդենց թաղը,
Պիտի աունենք վարժուհին,
Երանի ճաթի չուգողը:*

9

Ձէ'գօ² բըռոուօվ ալանի եեր,
Իմ ուգուօծը վարնի եեր:

*Թուչնիկ մը թուա գոյնգգոյն էր,
Իմ ուգածը վարժուհի էր:*

10

Կօըլը կէ'մնիցն ըգ կնմը,
Կըղիցէն հա վառիեր մնմը,
Ասս քի թըմմիցօըվ բունը,
Տահա չըկ'ըտուօծիցն գեր մնմը:

*Կալը կը կամենեն կամը,
Եկեղեցին կը վառէր մոմը,
Ըսի քեզի վերջացաւ գործը,
Տակաւին չեն գտած իր կնքամայրը:*

11

Ցիրիցը կը հէ'նի քէս,
Հա կինչեր. «Հիգգէս, հիգգէս»:

*Ցորենը կը հանէ քիստ,
Կը կանչէր. «Հոգիս, հոգիս»:*

12

Ջաղօրցց կանդուն գիլերը,
Թուրքմունը քիշտի ըգ պաները,
Ուրբօրթ լուսնու Շէ'րէ'թուօր,
Լակ'ըրթիցունց թիցերը:

*Ջաղացքը կ'աղան ալիւրը,
Թուրքմանը կը գարնէ պանիրը³,
Ուրբաթ լուսնա Շարաթ օր,
Ջրուցեցինք թոնիրը:*

13

Իշշօնքը ցէ'նիցն ըգ գէ'րէն,
Չըմ է'մընչի էր միցիէն,
Իմ սիրօրծ ի'շկի'նիէն,
Շընըֆըրիցս ըգ նուր տէ'րէն:

*Աչնան կը ցանեն գարին,
Չեմ ամչնար իրմէ,
Իմ սիրած աղջկան,
Շնորհաւորեցի նոր տարին:*

1. Լընդիցն = Ընտանիքի մականուն՝ Կնդեաններ:

2. Ձէ'գօ = Ջագուկ, հոս՝ բոչնիկ:

3. Պանիր գարնել = Պանիր պատրաստել:

14

Ճըղուօն շինուօծը քօյի,
Խընծնիրը տահա խօյի,
Կըտօրծ կըծծէք ի'շկի'նօրկ,
Ունցուօծիդ հէ'րէր խօյի:

*Ճիւղով շինածը թակ է,
Խնձորը տակաւին խակ է,
Կտրուած մազեր(ով) աղջնակ,
Ունեցածդ հարիւր բնաւորութիւն
է:*

15

Պաղտէ'տու քիրէն հէ'ստեր,
Կ'է'րէ'տուրնու տա⁴ աղջեր,
Չքմ պարըմըշըննու հիտը,
Թի չնուգուր ի վիտտիս չաղջեր:

*Պաղտատէն կը բերեն խտիր,
Գարատուրանէն՝ եղջիւր,
Չքմ հաշտուիր հետը,
Եթէ չի գար ոտքիս չաղաչէր:*

16

Մըտունք ի Սէպտեմբեր է'մէսը,
Կու տում քի գըրգակ'ես կիէսը,
Քի չաղուր է'սուղէն
Իսկըրիէն գէտիմ ըզ մէսը:

*Մտանք Սեպտեմբեր ամիսը,
Կու տամ քեզի բերքիս կէսը,
Քեզի գէշ ըսողին՝
Ոսկորէն կը գատեմ միսը:*

17

Ճամբընէն դէ'նուօկ-դէ'նուօկ⁵,
Ջըլըֆնէն պուլօրկ-պուլօրկ:

*Ճամբաները կտրուկ-կտրուկ,
Խոպոպաները ոլոր-ոլոր:*

18

Չալմու⁶ քաղին ըզ մէ'նուշօյը,
Ջըրըգօրն է'պիսն ըզ շէյօյը,
Կ'արշէս նըստօրծ քինթիրիէն,
Սիրիմ գօնկը է'նուշօյը:

*Չալմայէն կը քաղեն մանուշակը,
Պարանով կը կապեն շալակը,
Դիմացս նստած աղջիկներէն,
Սիրեմ ամենէն անուշիկը:*

4. Տա = Եղամակաւորիչ քառ:

5. Դէ'նուօկ = Դանակ: Հոս գործածուած է կտրուկ՝ կարն նամբայ իմաստով:

6. Չալմա = Հովոց մը Քեսապի արեւմտեան կողմը, Սիլիսիրան լեռան լանջին:

19

Հէ՛լպու բիբին ըզ ձօյթը,
Թիթիճիէն քնիճն ըզ թօթը,
Միբ խընէ՛մունց ի՛շկի՛նկուն
Քիշիցա՛ ըզ հէ՛սրօթը:

Հալէպէն կը բերեն ձիւթը,
Թթենիէն կը քաղեն թութը,
Մեր խնամիին աղջնակին
Քաշեցի կարօտը:

20

Ծուօվը իջօրվ լուղիլը,
Զուօրֆ մը գէ՛ցումֆ ջօր խումիլը,
Է՛սօրց. «Պագ-պագը խոսէնֆ,
Իլ տընիէրը լուղիլը»:

Ծովը իջաւ լողալու,
Միասին գացինք ջուր խմելու,
Ըսաւ. «Երբեմն-երբեմն խօսինք,
Ե՛լ տանիքը լողելու»:

21

Կութիէն բըռնին ըզ մալան,
Հա պըստու պախըրիէն կ՛ալան,
Ա՛շկ իրա, է՛սօրց ընծի.
«Դիրկուսկը տըսնըվէնֆ կ՛ալան»⁷:

Կոթէն կը բռնեն թիակը,
Կը փայլի պղինձին անակը,
Ա՛շք ըրի, ըսաւ ինծի.
«Դիրկուսկը տեսնուինք Գալան»:

22

Զան միլուօվ տա շօրտ մուտի,
Ի՛ննի՛մնիէն կիէսը սօտի,
Թըոցօրց ըզ խիլֆիս գըլխիէս,
Թի գուտիս նըռուն հուտի:

Զայն մը ելաւ, շատ մօտ է,
Ոսքերուն կէսը սուտ է,
Թըոցուց խելքս գլխէս,
Կարծես թէ նոան հատիկ է:

23

Պըլօր չըն խէշի գէրիէն,
Հօրցը հա գէ՛տէր ֆէրիէն,
Զը սէ՛կկու ֆիշտօրծ ֆէրիէն,
Պըր սէ՛կկէմ ֆինթօն սէ՛վտիէն:

Զաւար չեն խաշեր գարիէն,
Հացը կը գատէր քարէն,
Զմեռայ նետած քարէն,
Պիտի մեռնիմ աղջկան սէրէն:

7. Կ՛ալա = ֆեսապի մօտիկ բարձունք մը, ուրկէ կ՛երեւին միջնադարեան քերդի մը աւերակները:

24

Հ'օգէր իջնէր ցախիէն,
Բօյը չը երննէր վախիէն,
Ընծի կէ'սին տա Ղարիպ,
Կո՛ւ գու ի'շկի'նիէն հախիէն:

*Կու գար կ'իջնէր ցախէն,
Բակը չէր ելլեր վախէն,
Ինծի կ'սեն Ղարիպ,
Կու գայ աղջկան հախէն:*

25

Հէ'գունմբ ըզ կէ'րմէր չափման⁸,
Իլունմբ ըզ տունը կ'ակ'ման,
Խէ'պօրըր առօրվ էր տօրտը,
Քիշից հէ'ստըտօն տիգման:

*Հագանք կարմիր կօշիկը,
Ելանք տան աստիճանը,
Լուր առաւ իր հայրը,
Քաշեց հաստկեկ բիրը:*

26

Ձիօն դընէն ըզ ա՛յա՛րը,
Իշշօն կըսլախի սա՛մա՛րը,
Խըլտէ'ցու ա՛շկ իրա՛ւ էր,
Մըտօրվ կիճից գէր մա՛րը:

*Ձիուն կը դենն թամբը,
Իշուն կը վայլէ համետը,
Սխալեցայ աչք ըրի իրեն՝
Մտաւ կանչեց իր մայրը:*

27

Ընծա՛տ չըն ուտի ըզ նօրը,
Ծէ'լլըլվէն նըստէն դօրը,
Կունէր մըրմըր մումէ մը⁹,
Ծիփից ծէ'կօրն ըզ բօրը:

*Այդպէս չեն ուտեր նուրը,
Ծալուին նստին դուրը,
Ունէր շատախօս մայր մը,
Ձարկաւ յետոյքին բռունցքը:*

28

Ղուրկիցա՛ իսա՛չը գէր պօրպը,
Կանամ չիտօրըզ գըտտը նուպօրպը,
Շուն ի'շկէն, կիյնէս ի փանչաս,
Ակա՛ր քի դառնու տուլօրպը:

*Ղրկեցի քովը իր կնքահայրը,
Նորէն չտուաւ վերջին պատասխանը,
Շան աղջիկ, կ'իյնաս ձեռքս,
Եթէ դառնայ անիրը:*

8. Չափման = Մինչեւ ծունկ հասնող գիւղական կօշիկ:

9. Այլ տեղ՝ Գիրկուսկ կու գու պառօվը (Իրիկուան կու գայ պառուր):

29

Եունդուզիէն անուգ մը թրոտուով, *Ընկուզենիէն թռչնիկ մը թռաւ,*
 Ի՛շկի՛նիէն պուօգ մը առուով: *Աղջիկէն համբոյր մը առաւ:*

30

Պախըրիէն շինին սուգա՛կը,
 Հէ՛գօրծ իէր յօրջ գագակը,
 Տիսօ՞ գը հալանդըգ իէր,
 Վա՛խցու իսկիէ գէս տուգա՛կը:
*Պղինձէն կը շինեն մաղը,
 Հագած էր կապոյտ գագակը,
 Տեսայ զինք՝ առանձին էր,
 Վախցայ ձգէ զիս թակարդը:*

31

Խէփրուօն քաղից փուրթուկ՛ալը,
 Հէ՛ստօրծ իէր ծառէն տալը,
 Տիսուօ՛վ հա ուրթու՛մ ի խա՛չը,
 Փէ՛լնուրից վէգը շալը:
*Զամբիւղով քաղեց նարինջը,
 Կրթնած էր ծառի ճիւղին,
 Տեսաւ կ'երթամ քովը,
 Շալը փաթաթեց վզին: (Շրջուած)
 Փաթաթեց վզին շալը:*

32

Հա կինչէր քի, գընօյը,
 Օըն իջէ գը տըննօյը,
 Ակա՛ւր թի կը թըլպըրտու
 Կէ՛պի ըգ վիտտը սունօյը:
*Կը կանչէր քեզի, գնա՛ իրեն.
 Ա՛ն իջիր զինք տնակը,
 Եթէ չեմուչեմ ընէ՛,
 Կապէ ոտքը սիւնին:*

33

Զաղացքէն քիբին զիւրը,
 Հօըցը իփիին ի թիմէրը,
 Տիսու չը գնա՛տէ՛ցու գը,
 Թու՛նծըր իշքօրծ իէր ըգ ծիրէրը:
*Զաղացքէն կը բերեն ալիւրը,
 Հացը կ'եփեն թոնիրը,
 Տեսայ՝ չգիտցայ զինք,
 Թանձը քսած էր ծարիրը:*

34

Շօնը կէ՛պին ի բօյը,
 Մեգրիկուօն չէ՛փիցա՛ ըգ պօյը,
 Շու՛ն ի՛շկէն վառիցի գէս,
 Հա հէ՛գնէս գա՛տ քապօյը¹⁰:
*Շունը կը կապեն բակը,
 Մեգուրայով չափեցի հասակը,
 Շան աղջիկ, վառեցիր զիս,
 Կը հագնիս այդ քապոյը:*

10. Քապօյ = խօսքը նոյնանուն՝ ծանօթ կապտաւուն տափատի մասին է, որ խոր-
 հըրդանիշը դարձած է նորածնութեան:

35

Աս ֆինթիրը, ֆինթիրը,
Չըհե՛վնէն Քէ՛սպու կէննիրը,

Հա հուրթուն Քանատա,
Հա ըննուն միէյմէկ սատանա:

Այս աղջիկները, աղջիկները,
Չեն հաւնիր Քեսապի երիտասարդ-
ները,

Կ'երթան Քանատա,
Կ'ըլլան մէյմէկ սատանայ:

36

Վիտ չը կըխին ի պաղչան,
Չիժպուն Քէ՛սպու Փաշան¹¹,
Քէ՛սպու ֆըստանէն մօտան,

Կարնիէն իօրվ թա խալչան:

Ոտք չեն կոխեր պարտէզը,
Չեն հաւնիր Քեսապի Փաշան,
Քեսապի հագուստին նորածեւու-
թիւնը,

Կարճէն ելաւ մինչեւ երանքը:

37

Քաղօրֆ պառկէն եօթելը,
Բամպկիէն շինին ըզ պըրօթելը,

Չըմ գուտի եխդիէ՞ն իկիրի Քէ՛-
սօրպ,

Մուրօֆ-մըրգունֆէն մօտելը:

Քաղաքը կը պառկին պանդուկը,
Բամպակէն կը շինեն անթեւ ներք-
նաշապիկը,

Չեմ գիտեր ուրկէ՞ եկեր է Քեսապ,

Մօրուք-պեխին նորածեւութիւնը:

38

Էլլըֆուօն հա ֆանդին թօզը,
Դէ՛նկօրն հա կանդվին մօրզը,

Տըսնըհէնկ տանրա չըղուօժ
Ըրկ րանկ հա պույին մօրզը:

Չեռնոցով կը քաղեն թուզը,
Դանակով կը կեղուեն աղամա-
թուզը,

Տասնեւհինգ տարեկան չեղած՝
Երեք գոյն կը ներկեն մազը:

39

Ծուվիէն բիրին գուօղը,
Պաննա պըր ըննու վուօղը,
Հէ՛սիմ փուշման պըր ըննու
Եապաննը հիտ կէ՛րգըվօղը:

Ծովէն կը բերեն աղը,
Յայտնի պիտի ըլլայ վաղը,
Կ'ըսեմ պիտի գղջայ՝
Օտարականի հետ ամուսնացողը:

11. Փաշա = Մարդու ծածկանուն:

Տալօն քննից ըզ նօրը,
Քրֆֆէն շիրին տա շօրըրը,
Քուգուլուղու քննփիրէն,
Էկուն ի ծընուօծ ուօրը:

Մըննիլը պալլաի շըփիէն,
Հա է՛մընչի ըրկան պույէն,
Քուգուլուղսն ըննիլը,
Պալլաի իրիսէն, պույէն:

Խըննիցիէն կը հէնէն ըզ եէղը,
Զունտըր նէտս ի քոյն տիեղը:

Սարփին տուօքը հիմֆա¹² եէր,
Կ՛արթան¹³ ա՛մմէն տիլֆա եէր:

12. Հիմֆա = Երկար ու սրածայր նիւղերով թուփ, որուն նիւղերը կը գործածեն նիւղերու տանիքները ծածկելու:

13. Կ՛արթան = Մարդու ծածկանուն:

40

Ոստով կը քաղեն նուռը,
Քէֆին կը շարեն շարը,
Էքիզ Օլուգի աղջիկներուն՝
Տօնական է ծնած օրը:

41

Մտնելը յայտնի է շուքէն,
Կ՛ամչնայ երկայն հասակէն,
Էքիզ օլուգի ըլլալը,
Յայտնի է երեսէն, հասակէն:

42

Ննոցէն կը հանեն իւղը,
Ծանր նստիր քու տեղը:

43

Պարակին տակը հիմկա էր,
Կարթան հօրեղբայրը աղուէս էր:

FOLKSONGS FROM KESSAB

MIHRAN MINASSIAN

(Summary)

Kessab is one of the most lively Armenian centers in Syria, with a long history. Most of the people of the region have been farmers, and like many other agricultural communities they have been faithful to their dialect. They have their folklore, popular dances and songs. The author has collected one hundred and twenty-three folksongs of four-lines each, of which we publish here forty-three. While most of the songs speak of love, work and hope, a goodly number look at these experiences satirically.